ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 149-Ա

ք. Երևան

«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՀ N 316 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության ցանցային օպերատորի գործունեության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 9-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել դիմումը և ուժը կորցրած ճանաչել «ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը 2021 թվականի հուլիսի 9-ին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության ԿՀ N 316 լիցենզիան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 19
ք. Երևան